ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
«ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ТЕАТР
КУКОЛ ИМЕНИ
ОВ. ТУМАНЯНА» ГНКО

MINISTRY OF CULTURE OF
REPUBLIC OF ARMENIA
«YEREVAN STATE PUPPET THEATRE BY
THE NAME OF HOVHANNES TOUMANIAN»
NCSO

ՀՀ Երևան 375001, Սայաթ-Նովա 4, հեռ. 52 02 54, 56 32 52
Sayat -Nova 4, Yerevan 375001, RA
РА Ереван 0001 пр. Саят-Нова 4
tel. 56 99 94 56 32 52, **fax**: (37410) 520254
E-mail: rubentheatre@yahoo.com
www.armpuppet.am

N- 45

"_02" _12__ 2014 թ.

***N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին***

## Հարգելի Մասնակիցներ

«Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի կողմից կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Սայաթ Նովա 4 հասցեով, քարտուղարություն, հանձնաժողովի քարտուղար Արմինե Մելքոնյանին /հեռ. 091/50-80-77/ մինչև սույն թվականի դեկտեմբերի 12-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը կբացվեն «Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ-ի շենքի վարչական մասում, ք. Երևան, Սայաթ Նովա 4 հասցեով, սույն թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտը անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Մասնակիցների կողմից, որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում պարտադիր նշել «համարժեք» բառը:*

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում եմ «ԵՀԹՊՏԹ-ՇՀԱՊՁԲ-14/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Հարգանքներով՝

Տնօրեն Ռ. Բաբայան